Ո Ր Ո Շ Ու Մ
ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.10.2026թ. **ք. Աշտարակ**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի մարզային բաժնի հարկադիր կատարող արդարադատության լեյտենանտ՝ Թամարա Բաղդասարյանս ուսումնասիրելով թիվ 12171377 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04 հունիսի 2024 թ. տրված թիվ ԱՐԱԴ2/1257/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է հրապարակային սակարկություններով վաճառել Արագածոտնի մարզ, գ. Եղնիկ, 9-րդ փողոց, 21 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը և վաճառքից ստացված գումարը բաշխել Սոսին Մանասյանի, Արթուր Մանասյանի, Դոնարա Մանասյանի՝ անշարժ գույքում յուրաքանչյուրի բաժնին համապատասխան՝ բռնագանձում տարածելով Սոսին Բագրատի Մանասյանին հասանելիք ¼ բաժնի վրա՝ թիվ ԱՐԱԴ2/0586/02/18 քաղաքացիական գործով բռնագանձման ենթակա գումարի չափով:

Կատարողական գործողությունների ընթացքում թիվ 1379389 կադաստրային վկայականի համարով անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով կայացվել է փորձագետ նշանակելու մասին որոշում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի մարզային բաժին է մուտքագրվել «Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 13/1196/25 եզրակացությունը համաձայն որի պարտապան Սոսին Մանասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող թիվ 1379389 կադաստրային վկայականի համարով անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է՝ 13.940.000 ՀՀ դրամ

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ‹‹Դատական ակտերի հարկադիր կատարման մասին›› ՀՀ օրենքի 28, 28.1,43 և ‹‹Հրապարակային սակարկությունների մասին››ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սոսին Մանասյանին ընդ. համ. սեփ. իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը

հ/հ	**Գույքի անվանումը,** նկարագիրը	գնահատման գինը	**մեկնարկային գինը (75%)**	**գույքի քանակը**
1.	**Արագածոտնի մարզ,** գ. Եղնիկ, **9-րդ փողոց, 21 բնակելի** տուն, **Թիվ՝ 1379389 վկ.**	13.940.000 ՀՀ դրամ	**10.455.000 ՀՀ դրամ**	**1 հատ**

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **http//harkadir.ajurd.am** կամ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտոնային աճուրդի սկիզբը՝ 25.11.2026թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին » ՀՀ օրնքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ծանոթություն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը: Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնիհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ՝ *Թ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*